

**ԵՐԿՐԱԿԵՂԵՎ**, երկրագնդի արտաքին կարծր քարե թաղանթը: Հաստությունը ցամաքատիպ պլատֆորմների սահմաններում 35—45 կմ է, օվկիանոսային պլատֆորմների սահմաններում՝ 5—6 կմ, ցամաքային լեռնաշղթաների կտրվածքում՝ 40—70 կմ, օվկիանոսային լեռնաշղթաների կտրվածքում՝ 5—10 կմ, ցամաքներից օվկիանոսներին անցման գոտիներում՝ 16—17 կմ: Ե. ունի եռաշերտ կառուցվածք (տես *Երկիր*): Ստորին շերտը՝ բազալտայինը, ունի բազալտների համապատասխանող ֆիզիկական հատկություններ, սիջին հաստությունը մայր ցամաքների կտրվածքում 16—18 կմ է: Օվկիանոսային մարզերում՝ 4—5 կմ: Բազալտային շերտը և նրա տակ գտնվող երկրի մանթիան սահմանաբաժանվում են Մոխորովիչի մակերևույթով: Այդ շերտի վրա մայրցամաքային պլատֆորմների սահմաններում տեղադրված է գրանիտային շերտը՝ 15—35 կմ հաստությամբ:

Դրանց սահմանաբաժանը կոչվում է Կոն-  
րադի մակերևույթ: Ե-ի վերին շերտը՝  
նստվածքային ծածկոցը, կազմված է ավա-  
զաքարերից, կավաքարերից, կրաքարե-  
րից, հրաբխային և այլ ապարներից ու  
օվկիանոսային նստվածքներից: Այն որոշ  
տեղերում բացակայում է, իսկ առանձին  
դեպքերում ունի 10—15 կմ հաստություն:  
Նայկական լեռնաշխարհում Ե-ի հաստու-  
թյունը տատանվում է 40—55 կմ սահման-  
ներում (բազալտային շերտը մոտ 17 կմ  
է, գրանիտայինը՝ 20—30 կմ, նստվածքա-  
յին ծածկոցը՝ 0—6 կմ):

Պինդ վիճակում է գտնվում նաև Երկրի  
մանթիայի վերին հորիզոնը, որը Ե-ի  
հետ միասին առաջացնում է լիթո-  
սֆերան՝ Երկրի մոտ 70—80 կմ հաս-  
տությամբ քարային պատյանը: